ԼՈՒՍԱԿԵՐՏԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Մ. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ

1971 թ. ամռանը ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի կազմակերպած գիտարշավի ընթացքում ուսումնասիրվեցին և չափագրվեցին Լուսակերտից ոչ հեռու, Հրազդանի ձորում տեղադրված Կարենիսի վանքը և Լուսակերտի միանավ դահլիճը։ Երկու հուշարձաններն էլ իրենց հորինվածքի մի շարք առանձնահատկություններով բավական հետաքրքրական և արժեքավոր են վաղ միջնադարի հայ ճարտարապետության պատմության համար։ Սակայն դրանք մինչև այժմ չեն ուսումնասիրվել և ներկայացվել մասնագիտական դրականության մեջ։

Վանքի մասին պատմիչները, ճանապարհորդները, ազգագիրները հիշատակում են տարբեր անուններով՝ Կարենիսի, Առաքելոց, Մաթևոս ավետարանիչի ու Անդրեյ առաքյալին նվիրված։ Ըստ Շահխաթունյանցի, այն Կարենիսի է կոչվում մոտակա Գյումուշ գյուղի անունը նախկինում Կարենիս լինելու պատճառով[1]։ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը նշում է, որ վանքը «...շինուած է յանուն սուրբ Մատթեոսի աւետարանչին, սուրբ Անդրեի առաքելոյն»[2]։ Միաժամանակ երկու անուններով՝ Կարենիսի և Առաքելոց, անվանվում է «Ջամբրում»[3]։ Սոսկ Առաքելոց է կոչում Առաքել Դավրիժեցին և միաժամանակ նշում, որ այնտեղ պահվել են Մաթևոս ավետարանիչի և Անդրեյ առաքյալի մասունքները[4]։ Կարենիսի վանքը հիշատակվում է նաև Ալիշանի[5] և Էփրիկյանի[6] աշխատություններում։

Այս վանքն ուշ միջնադարում ոչ միայն հայտնի է եղել, այլև հարուստ էր՝ ունեցել է երեք ջրաղաց Կարենիս գյուղում, այգի և ձիթհանք Օշականում[7], ինչպես նաև «...վիճակս յերկրոջս Երևանու զԿարենիս և զՂարաօրան գիւղս»[8]։

Կարենիսի վանքը գտնվում է Գյումուշի հիդրոէլեկտրակայանից հյուսիս, Հրազդանի ձորում։ Նրա երբեմնի համալիրից պահպանվել են եկեղեցին և արևմուտքից կցված գավիթը։

Եկեղեցին ունի թաղածածկ դահլիճի հորինվածք, չափերը մեծ չեն (արտաքին չափերն են 4,90×7,70 մ), կառուցված է տեղական կարմիր տուֆի սրբատաշ քարերից և բավական լավ է պահպանվել։ Աղոթասրահը (ներսի չա-

---

1 Հովհաննես եպ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատայ, հ. Բ, էջմիածին, 1842, էջ 206—207։

2 Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ նոր Բայազիտ գաւառ, էջմիածին, 1895, էջ 307։

3 Սիմեոն կաթողիկոս, Ջամբր, էջմիածին, 1873, էջ 141։

4 Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, էջմիածին, 1896, էջ 179։

5 Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 288։

6 Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1889, Բ, 297—98։

7 «Ջամբր», էջ 141։

8 Նույն տեղում, էջ 282։

փերը 3,50×6,45 մ) արևելքից ավարտվում է թեթևակի պայտաձև հատակագիծ ունեցող աբսիդով և դրսից ներառված է արտաքին պատերի ուղղանկյան մեջ։ Պատերը հաստ չեն (0,7—0,8 մ), որի հետևանքով հիմնական կրող զանգվածը ոչ միայն միջի կրաբետոնն է, այլև երեսպատման որմնաքարերը։ Մաքուր տաշած քարերից են իրականացված ինտերյերում ինչպես պատերը, այնպես էլ աբսիդը և ծածկի թաղը։ Հուշարձանը ներսից սվաղված է եղել, որից այժմ հետքեր են մնացել։ Եկեղեցու մուտքերից պահպանվել է միայն հարավայինը (1,20 մ լայնությամբ), իսկ արևմտյանը, որը բացվել է դեպի գավիթը, ամբողջովին քանդված է։ Լուսամուտները երկուսն են՝ հարավային և արևմտյան պատերում և բավական լայն են։ Ուշագրավ է, որ աբսիդը կառուցված է առանց լուսամուտի։

Կարենիսի վանքի եկեղեցին չունի զարդաքանդակներ։ Նրա արտաքին Հակատները զուսպ են և լուծված առանց հարդարանքի։ Նույնիսկ հարավային մուտքը ոչնչով չի շեշտվում։ Միակ ճարտարապետական մանրամասը հարավային լուսամուտի երեսակալն է, որն ունի կիսագլանիկով պարզ տրամատ։ Նույնպիսի տրամատ ունի նաև կառուցվածքի քիվը։ Նման քիվերի և բարավորների հանդիպում ենք Հայաստանի VI—VII դդ. մի շարք հուշարձաններում (Պտղնի, Գայանե, Հռիփսիմե)։

Կարենիսի վանքի ճարտարապետական ընդհանուր հորինվածքի ուշագրավ առանձնահատկություններից է եկեղեցու ներսում տտորգետնյա դամբարանի առկայությունը։ Այն փոքր, թաղածածկ մի տարածություն է, որն արևելքից վերջանում է գմբեթով ծածկված աբսիդով։ Մուտքը եկեղեցու արևմտյան կողմից է։ Դամբարանը կառուցված է փոքր չափի, աղյուսի նման մշակված բազալտե քարերից և տեղադրված է եկեղեցու ընդերկայնական առանցքով, աղոթասրահի հատակի տակ։ Ունի երկու խորշ՝ մեկը աբսիդում, մյուսը՝ ավելի մեծը, հարավային պատում, որտեղ և հավանաբար պահվել են մասունքները։ Բերենք Մ. Սմբատյանցի նկարագրությունը, որի այցելության ժամանակ ինչպես եկեղեցին, այնպես էլ դամբարանը ավելի բարվոք վիճակում են եղել. «Կարենավանից տաճարի սեղանոյ ներքոյ կայր փոքրիկ պահարանաձև խորան, որպէս Օշականայ եկեղեցւոյն, և խորանի մեջ մի շատ փոքրիկ դռնակ էր երևում, որ տաներ հարաւային կողմից եկեղեցոյ ներքև. որով մի մարդ հագիվ կարող էր մտնել ու ելնել։ Իհարկե, ժամանակով երբեմն պահուած է եղել այս պահարանին մեջ սրբոց մասունքներ, ինչպես Առաքել պատմագիր վարդապետն Դավրիժեցի գրե...»[9]։ Պատմիչը հիշատակում է, որ XVII դ. սկզբին, Մելիքսեթ կաթողիկոսի գահակալության տարիներին, կաթոլիկ միսիոներները այցելել են Կարենիս և վանքից հափշտակել Անդրեյ առաքյալի մասունքները, որոնք պահված են եղել «... ի ներքոթ բեմին...»[10]։

Դամբարանի հիմնական մուտքը եղել է արևմտյան կողմից՝ եկեղեցու աղոթասրահից։ Այդ մասին է վկայում դեպի դամբարան տանող ոչ մեծ թաղածածկ անցումը, որտեղ և տեղադրված են դեպի ներքև տանող աստիճանները։ Ինչ վերաբերվում է Սմբատյանցի նշած հարավային մուտքին, ապա դա տեղում պահպանված այն խորշն է, որն իր փոքր չափերով դժվար թե որպես մուտք ծառայեր։ Ճիշտ է, Հայաստանի V—VII դդ. դամբարանները, որոնց

9 Սմբատեանց, Գեղարքունի, էջ 308։
10 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն..., էջ 179։



Նկ. 1.Կարենիսի վանքի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից



Նկ. 2. Կարենիսի վանքի հատակագիծը

վրա հետագայում եկեղեցիներ են կառուցվել (Օշական, Հռիփսիմե, Գայանե), մուտք ունեն հյուսիսային կամ հարավային ավանդատներից, սակայն Թ. Թորամանյանի հետազոտությունները ցույց են տվել, որ, օրինակ Հռիփսիմեի դամբարանի սկզբնական մուտքը եղել է արևմուտքից՝ աղոթասրահից. «Այս սենյակին (դամբարանի) արևմտյան կողմը եթե լավ քննենք, կտեսնենք, որ սրբատաշ քարով շատ խնամքով փակված մի դուռ կա, որը... այժմ փակ է..., մանրակրկիտ քննությունները և չափերը ցույց տվեցին, որ շատ հին ժամա-

նակ գերեզմանը շինված է եղել ուղղակի բեմին ներքև և գերեզմանի մուտքը եկեղեցվո բեմին առջևից էր»[11]։

Կարևոր է եկեղեցու և դամբարանի կառուցման ժամանակաշրջանի հարցը։ Կարենիսի վանքի եկեղեցու ճարտարապետական ողջ հորինվածքը և նրա առանձին մանրամասները (աբսիդի հատակագծի և բեմի կամարի պայտաձևությունը, լուսամուտների լայն բացվածքները, աբսիդում լուսամուտի բացակայությունը, VII դ. հուշարձաններին բնորոշ տրամատ ունեցող քիվը և լուսամուտի երեսակալը, կառուցողական տեխնիկան) միանգամայն թույլ են տալիս հուշարձանը թվագրել ոչ ուշ, քան VII դ.։

Կարենիսի եկեղեցին իր մի շարք առանձնահատկություններով կարևոր տեղ է գրավում վաղ միջնադարի հայ ճարտարապետության հուշարձանների շարքում։ Ամենից առաջ այն Լեռնակերտի IV դ. եկեղեցու հետ մեզ հայտնի այն եզակի միանավ թաղածածկ դահլիճներից է, որն անաղարտ պահպանել է իր նախնական ծավալային-տարածական ամբողջ հորինվածքը։ Բացառիկ է նաև աբսիդում լուսամուտի բացակայությունը՝ նման երևույթ Հայաստանի վաղ միջնադարի պաշտամունքային կառուցվածքներում հանդիպում ենք միայն Ջարջառիսի միանավ դահլիճում։ Եվ, վերջապես, աղոթասրահում դամբարանի գոյությունը Կարենիսի եկեղեցին դասում է Հայաստանի VII դ. այն սակավաթիվ հուշարձանների թվին, որոնք ունեն նման ստորգետնյա կառուցվածք (Հռիփսիմե և Գայանե տաճարներ)։

Կարենիսի վանքի գավիթը ուշ միջնադարի կառուցվածք է։ Այն ուղղանկյուն, համարյա քառակուսի շինություն է (արտաքին չափերն են 8,8×9,70 մ)։ Գավիթը կառուցված է բազալտի անմշակ և կիսամշակ քարերից, կրաշաղախով և հիմնականում լավ է պահպանվել՝ վնասված են միայն տանիքը և արևմտյան ու հարավային պատերի վերին մասերը։ Գավիթի ներսում՝ հյուսիսային և հարավային պատերից դուրս են գալիս երկու զույգ հաստահեղույս որմնամույթեր, որոնց միջև ձգված կամարների վրա քարձրանում է գմբեթը։ Մույթերի միջև, ինչպես նաև մույթերի և արևելյան ու արևմտյան պատերի միջև ստացվող խորշերը ծածկված են թաղերով։ Անցումը՝ գմբեթատակ քառակուսուց դեպի գմբեթն իրականացված է առագաստների միջոցով։ Կառուցվածքում տարբեր շինանյութեր են օգտագործվել։ Այսպես, եթե գավթի պատերը, կամարները և թաղը բազալտից են, ապա գմբեթի առագաստները շարված են մաքուր տաշված տուֆով։ Տարբեր է նաև բազալտի մշակման աստիճանը՝ գավթի անկյունները, մուտքը, կամարները շարված են մաքուր տաշված բազալտից, իսկ պատերը և թաղերը՝ կոպտատաշ կամ չմշակված բազալտից ու որձաքարից։ Գավթի պատերում օգտագործվել են XV—XVI դդ. գերեզմանաքարեր և խաչքարեր (որմնամույթերից մեկում ագուցված խաչքարը 1567 թ. է)[12]։ Այս երևույթը, ինչպես և գավթի կառուցողական տեխնիկան բնորոշ են Հայաստանի XVII—XVIII դդ. ճարտարապետությանը։ Հավանական է, որ գավիթը կառուցվել է XVII դարի սկզբին՝ Կարենիսի առավել բարգավաճման տարիներին։

---

11 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1942, էջ 293։

12 Ս մ բ ա տ ե ա ն ց, Գեղարքունի, էջ 307։

Ինչպես տեսանք, Կարենիսի վանքի գավիթն ունի գմբեթավոր դահլիճի հորինվածք։ Դա քաշ ծանոթ էր միջնադարյան հայ ճարտարապետությանը դեռ VI դ. սկսած և մեծ տարածում է ստանում IX—XIV դդ. վանքային համալիրներում։ Սակայն եթե այդ հորինվածքը լայնորեն կիրառվել է պաշտամունքային կառուցվածքներում, ապա աշխարհիկ շինություններում, մասնավորապես գավիթներում այն չի հանդիպում։ X—XIV դդ. գավիթները պատկանում են հետևյալ հիմնական տիպերին՝ քառասյուն, երկսյուն, խաչվող կամարներով, արտաքին պատերի վրա նստող ծածկով, միանավ և եռանավ դահլիճներ, ինչպես և գավիթ-սրահներ[13]։ Իսկ ուշ միջնադարի գավիթներն ունեն քառամույթ կառուցվածք (Վարագավանք, Նարեկավանք, Աղթամար) կամ սրահաձև են (Մուղնու վանք, Երևանի Զորավոր, Շատին վանք, Տաթևի Մեծ անապատ և այլն)։ Հետևաբար, Կարենիսի վանքի գավիթն այս տիպի կառուցվածքներից առայժմ մեզ հայտնի այն միակ օրինակն է, որն ունի գմբեթավոր դահլիճի հորինվածք։

Լուսակերտից հյուսիս-արևելք, Հրազդանի ձորալանջին գտնվում է վաղ միջնադարի հայ ճարտարապետության մի ուրիշ հետաքրքրական և արժեքավոր հուշարձան։

Լուսակերտի (Գյումուշի) միանավ սրահը չի հիշատակվում պատմիչների և ազգագիրների մոտ։ Սմբատյանցը միայն նշում է, որ գյուղում կա «...մի հին սրբատաշ քարով շինած եկեղեցի... ամենևին դրածոյ նշան չերևեցավ որմանց և դրանց վերայ»[14]։

Հուշարձանն ունի պարզ կառուցվածք՝ այն արևելքից արևմուտք ձգված ուղղանկյուն դահլիճ է (չափերը՝ 4,90×8,20 մ), որն արևելյան կողմում ավարտվում է ներսից խիստ շեշտված պայտաձև հատակագիծ ունեցող աբսիդով։ Լուսակերտի միանավ սրահն ունեցել է շինարարական երկու շրջան։ Նախնական հորինվածքից ողջ պարագծով պահպանվել են մեկից երկու մետր բարձրությամբ պատերը, կառուցված՝ կոպիտ մշակված և անմշակ բազալտ քարից, կրաշաղախով։ Սրահի աբսիդը ներսից նույնպես պայտաձև է, իսկ դրսից կիսաշրջանաձև։ Այս բազալտակուռ պատերի վրա բարձրացվել են սրբատաշ տուֆ քարից շարված, բավական հաստ պատեր (լայնությունը 1,22 մ), իրականացված կանոնավոր շարքերով։ Ուշագրավ է վերակառուցված մասի աբսիդի եզրանկարը դրսից, որովհետև բազալտի կլոր պատերի վրա բարձրացվել է արդեն բազմանիստ (յոթանիստ) աբսիդ։

Հուշարձանն ունի միայն մեկ մուտք՝ հարավից, որի պարզ ուղղանկյուն բացվածքը (1,15 մ լայնությամբ) ծածկված է մեկ ամբողջական բարավորով։ Վերջինս տուֆ քարի մեծ չափերի մի հեծան է, քանդակազարդ ճակատով։ Լուսամուտները երկուսն են՝ արևմտյան պատում և աբսիդում, դրանք լայն են և դեպի ներս թեթևակի նեղացած։ Վերակառուցման ժամանակ հուշարձանի երկայնական պատերի ներսում կցել են մեկ զույգ որմնասյուներ, որոնց վրա հանգչել է թաղակիր կամարը։ Որմնասյուները տուֆից են և եթե դրանք պատերի վերին մասի հետ օրգանապես կապվում են, ապա ստորին, բազալտի շարված պատերի հետ կոնստրուկտիվ կապ չունեն։

---

13 С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, стр. 15.

14 Սմբատեանց, Գեղարքունի, էջ 307։

Հուշարձանի ներսում ընդերկայնական առանցքով դրված են երեք քարե (բազալտի) խարիսխներ, որոնցից արևմտյանն ուղղանկյուն է, իսկ մյուս երկուսը կլոր (կես մետր տրամագծով)։ Միջին կլոր խարիսխը շրջանաձև փոս ունի, և իր չափերով համապատասխանում է փայտե սյան բնին։ Սա նշանակում է, որ հետագայում, հավանաբար ուշ միջնադարում, քարե թաղի քանդվելուց հետո եկեղեցին փայտածածկ է դարձել։ Այդ ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ պատերը հիմնականում ավարտվում են միևնույն բարձրության վրա և նրանց վերին մասը հարթեցված է փայտե ծածկն իրականացնելու համար։ Այս վերակառուցումից հետո Լուսակերտի միանավ դահլիճը նմանվել է Մարտունու շրջանի Վերին Գյոզալդարա գյուղի հուշարձանին[15]։ Լուսակերտի կառուցվածքը համարյա զուրկ է հարդարանքից՝ միակ դեկորատիվ տարրը, ինչպես նշվեց, հարավային մուտքի բարավորն է։ Վերջինիս զարդաքանդակի կենտրոնում, շրջանի մեջ ներգծված է հավասարաթև խաչ, որը տեղադրված է բարավորի մեջտեղում և ունի նրա բարձրությունը։ Բարավորի վերին երկու կողքերի եզրերին զուգահեռ քանդակված են իրար կից, ոչ մեծ չափերի շրջանագծեր, կիսագնդերով։ Միայն վերին՝ հավասարաթև խաչից դեպի արևելյան եզրը ընկած մասում շրջանագծերի մեջ ներգծված է ռոմբ և ապա քանդակված են ուռուցիկ կիսագնդեր։ Քանդակազարդ մասը մոտ երեք սմ դուրս է բարավորի հարթությունից։

Մուտքի բարավորի վրա շրջանի մեջ ներգծված հավասարաթև խաչ քանդակելը բնորոշ է վաղ միջնադարի Հայաստանի, ինչպես և քրիստոնյա հարևան երկրների ճարտարապետական հուշարձաններին[16]։ Ուշագրավ է, սակայն, որ Լուսակերտի միանավ դահլիճի բարավորի զարդաքանդակի հորինվածքն ունեն հայ դասական ճարտարապետության IV—V դդ. այնպիսի կարևորագույն և հանրահայտ հուշարձաններ, ինչպիսիք են Երերույքի տաճարը և Քասաղի բազիլիկան։ Այսպես, օրինակ, Լուսակերտի եկեղեցու բարավորի զարդաքանդակը հար և նման է Երերույքի արևմտյան մուտքի զարդաքանդակին, միայն այն տարբերությամբ, որ վերջինիս կիսագնդերով շրջանների շղթան շարունակվում է նաև բարավորի ներքին եզրին զուգահեռ, իսկ խաչի երկու կողմում թռչուններ են քանդակված։ Երերույքի հարավային մուտքերի բարավորներն էլ այդպիսիք են, միայն այստեղ խաչի կողքերին քանդակված են վեց թերթիկանի վարդյակներ և արմավենիներ։

Մոտավորապես նման հորինվածք ունեն Քասաղի բազիլիկայի հարավային և արևմտյան մուտքերի ճակատաքարերը, սակայն այն տարբերությամբ, որ կիսագնդերով շրջանների շղթան բարավորի վերին մասում չի քանդակված։ Ինչպես Քասաղում, այնպես էլ Լուսակերտում զարդաքանդակը զբաղեցնում է ճակատաքարի երկարության մի մասը միայն։ Բայց եթե Քասաղի բազիլիկայի մուտքի բարավորի ազատ մակերեսները ներկված են[17], ապա այստեղ նրանք զարդաքանդակների հարթությունից ետ են դրված։

Հայ ճարտարապետության վաղ միջնադարի միանավ դահլիճների շարքում Լուսակերտի հուշարձանը կարևոր տեղ է գրավում նաև իր ծավալային-

---

15 Ս. Խ. Մնացականյան, Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 141։

16 «Ակնարկներ հայ արվեստի պատմության», 2, Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 97։

17 Ա. Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկան, Երևան, 1955, էջ 78։



Նկ. 3. Լուսակերտի միանավ դահլիճի ընդհանուր տեսքը



Նկ. 4. Լուսակերտի միանավ դահլիճի հատակագիծը.
ա) մինչև վերակառուցումը, բ) V դ. վերակառուցումից հետո

տարածական առանձնահատկություններով։ Ինչպես տեսանք, կառուցվածքի տուֆաշեն մասի պայտաձև աբսիդը դրսից բազմանիստ է։ Հայաստանի IV—VII դդ. միանավ դահլիճների մեծամասնության աբսիդները դրսից վերցված են արտաքին պատերի ուղղանկյան մեջ և աղոթասրահի հետ օրգանական միասնություն են կազմում (Կառնուտ, Լեռնակերտ, Գառնի, Թանահատ, Ագարակ, Դվին, Էջմիածին, Ավան և այլն)։ Սակավաթիվ են այն միանավ կառուցվածքները, որոնց աբսիդի ծավալը ելնում է աղոթասրահի ընդհանուր ծավալից դուրս և արտաքուստ բազմանիստ է։ Այդպիսի հուշարձաններից են Հայաստանում Ջարջառիսի, Ջրվեժի, Ողջաբերդի V դ. եկեղեցիները (ըստ Ն. Տոկարսկու, Ողջաբերդի եկեղեցին հայ ճարտարապետության առաջին գմբեթավոր հուշարձաններից է)[18]։

Լուսակերտի միանավ դահլիճը վերակառուցումից հետո ստացել է այս նույն հորինվածքը և ունի համարյա նույն չափերը, ինչ Ջրվեժի եկեղեցին (միայն այն տարբերությամբ, որ Ջրվեժի, ինչպես և Ջարջառիսի աբսիդները հընգանիստ են, իսկ Լուսակերտինը՝ յոթանիստ)[19]։

Սակայն մինչև վերակառուցումը Լուսակերտի միանավ դահլիճի նախնական հորինվածքը դրսից ունեցել է ոչ թե բազմանիստ, այլ կլոր աբսիդ։ Սա արդեն խիստ հազվադեպ երևույթ է վաղ միջնադարի հայ ճարտարապետության նույնատիպ հուշարձանների համար։ Մեզ հայտնի մյուս օրինակը գտնվում է Գորիսի շրջանի Վերիշեն գյուղում։ Գյուղամիջում այժմ կանգուն Ս. Հռիփսիմե եկեղեցին հիմնովին վերակառուցվել է XVII դ. և ամենամեծն է միանավ թաղածածկ դահլիճների շարքում (ընդհանուր երկարությունը՝ 27,30 մ)։ Ուղղանկյուն դահլիճը (4,6×19,3 մ չափերով) արևելքից ավարտվում է դրսից և ներսից կիսաշրջանաձև աբսիդով։ Երկայնական պատերը ներսում ջլատվում են չորս զույգ որմնամույթերով, որոնց միջև ձգված կամարներով, պատերին կից, ստացվում են հնգական խորշեր։ Թաղակիր կամարներ չկան։ Հարավային պատում պահպանվել են նախնական կառուցվածքի արևմտյան անկյունը և մուտքը, որն ուղղանկյուն բացվածքի երկու կողմերում ունի կլունակներ (Միծեռնավանքի նման), վրան քանդակված շրջանագծի մեջ ներգծված վեց թերթիկանի վարդյակներ։ Պատերի մեջ օգտագործվել են նաև հնադույն կառուցվածքի բեկորներ, որոնք բնորոշ են վաղ միջնադարի հայ ճարտարապետությանը։

Դրսից կիսաշրջանաձև աբսիդ ունի Վրաստանի V դ. վերջին քառորդում կառուցված Բոլնիսի Սիոն եռանավ բազիլիկան։ Միայն Բոլնիսի հուշարձանը կառուցված է սրբատաշ քարերից, իսկ Լուսակերտի եկեղեցու նախնական հորինվածքը կառուցված է կոպիտ մշակված բազալտե քարերից և որձաքարից։ Նման շինարարական տեխնիկան կիրառվել է ինչպես ուրարտական, այնպես

---

18 «Археологические раскопки в Армении, № 11», Н. М. Токарский, Джрвеж, Вохджаберд, Ереван, 1964, стр. 56—70.

19 Հայ ճարտարապետական հուշարձաններում բազմանիստ աբսիդ ունեն նաև Շողակաթի ու Արտաշատի շրջանի Իմիրզեկ գյուղատեղի եկեղեցիները։ Ըստ Հայաստանի հուշարձանների պահպանության վարչության արխիվի չափագրության, վերջինս ունի 1։2 հարաբերությամբ ուղղանկյուն դահլիճ, որն արևելքից պսակվում է ներսից պայտաձև, դրսից հնգանիստ աբսիդով։ Թաղածածկ է, որմնամույթերի վրա հանգչող մեկ թաղակիր կամարով։ Միակ դուռը հյուսիսից է։ Շենքի տարածական-ծավալային հորինվածքը հանգչում է եռաստիճան գետնախարիսխի վրա։

Լլ հելլենիստական և նախաքրիստոնեական հայ ճարտարապետության մեջ։ Իսկ վաղ միջնադարից մեզ հասած միանավ դահլիճները և եռանավ բազիլիկաները Հայաստանում հիմնականում կառուցված են սրբատաշ քարերից։ Հետևաբար, կարելի է ասել, որ մինչև V դ. հայ ճարտարապետության մեջ, թեպետ և սահմանափակ, կիրառվել է պաշտամունքային կառուցվածքները կիսամշակ և անմշակ քարերից իրականացնելու եղանակը։

Այն փաստը, որ Լուսակերտում որմնամուլթերը ավելացվել են վերակառուցման ժամանակ և նախնական հորինվածքը առանց թաղակիր կամար է եղել, հիմք է տալիս կարծելու, որ հուշարձանը սկզբում ունեցել է փայտե ծածկ։

Լուսակերտի եկեղեցին, որը կառուցվել և վերակառուցվել է V դ. ոչ ուշ, ձևերով պարզ է, ոչ մեծ չափերի, հարուստ չէ հարդարանքով։ Բայց չնայած դրան, այն հայ ճարտարապետության կարևոր հուշարձաններից է և գալիս է լրացնելու Հայաստանի վաղ միջնադարի միանավ դահլիճների հորինվածքի զարգացման պատմությունը։

ДВА АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКА ЛУСАКЕРТА

М. М. АСРАТЯН

Резюме

Летом 1971 г. автором статьи были обмерены и изучены два памятника архитектуры Армении раннего средневековья, неизвестных в научной литературе. Один из них—монастырь Каренис, расположен севернее Гюмушской ГЭС, в Разданском ущелье. Из комплекса сохранились церковь, имеющая композицию сводчатого зала, и примыкавший к ней с западной стороны притвор. Архитектурный анализ церкви Карениса позволяет ее датировать первой половиной VII в. Памятник имеет ряд особенностей, которыми выделяется в зодчестве Армении: церковь, в отличие от других сводчатых залов этой эпохи, сохранила свою первоначальную объемно-пространственную композицию. Она, как и Джарджарисская церковь, лишена окна с восточной стороны. И, наконец, наличие крипты в зальной части ставит церковь Карениса в один ряд с немногими аналогичными памятниками Армении VII в.

На северо-востоке Лусакерта, у бровки Разданского ущелья, находится небольшая однонефная церковь, которая имеет важное значение в истории армянской архитектуры раннего средневековья. Верхняя, реконструированная в V веке часть церкви, построена из чистотесанного туфа и имеет простую композицию—прямоугольный зал завершается с востока подковообразной абсидой, выступающей наружу семью гранями. Орнамент резьбы перемычки единственного входа повторяет резьбу тимпанов западных входов Ереруйкской базилики—известного памятника Армении V века. Нижняя же часть церкви построена из грубо околотового базальта и имеет полукруглую снаружи абсиду. Такая форма абсиды, а также строительная техника первоначального сооружения Лусакертской церкви, не имеют аналогии среди известных нам культовых зданий Армении первых веков после принятия христианства.